



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ»

Ա. Միլասյան

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«31» 03 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 34

Ձեռնարկողը՝

<<Էդգար և Արման>> ՍՊԸ
<< Շիրակի մարզ, գ. Հատիճ, փ.10, բն.26

Գործունեությունը՝

Արթիկի հրաբխային խարամի հանքավայրի Հատիճի
փեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվեկրկություն
<< Շիրակի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Վ. Սահակյան

Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 34

«31» 03 2017թ.

«Էդգար և Արման» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Շիրակի մարզի Արթիկի հրաբխային խարամի հանքավայրի Հառիճի տեղամասի արդյունահանման գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝	«Էդգար և Արման»ՍՊԸ
Նախագծող՝	«Էդգար և Արման» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ.
Տեղադրման վայրը՝	ՀՀ Շիրակի մարզ
Գործունեության կատեգորիան	/Ա/ կատեգորիա

Արթիկի հրաբխային խարամների հանքավայրի Հառիճի տեղամասը գտնվում է Արթիկ քաղաքից 1-1.5կմ հեռավորության վրա դեպի հյուսիս-արևելք:

Տեղամասը Արթիկ քաղաքի հետ կապված է Արթիկ-Ապարան խճուղային ասֆալտապատ ճանապարհով: Արթիկ քաղաքը Գյումրի քաղաքի հետ կապված է խճուղային ասֆալտապատ ճանապարհով և երկաթուղով: Մոտակա բնակավայրերն են Հառիճ, Փարոս, Սարալանջ գյուղերը:

Արթիկի հրաբխային խարամի հանքավայրի Հառիճի տեղամասի փոփոխված նախագիծը կազմված է «Էդգար և Արման» ՍՊԸ տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախագծման համար որպես ելակետային նյութ ծառայել են նշված հանքավայրի երկրաբանական հետախուզման աշխատանքների հաշվետվությունը և ՀԽՍՀ պաշարների տարածքային հանձնաժողովի 22.06.1962թ թիվ 126 արձանագրությունը: Հառիճի տեղամասում խարամի պաշարները հաստատվել են հետևյալ կարգով և քանակությամբ՝ A – 2691739մ³, B - 5403957 մ³, A+B-8095696մ³:

Արթիկի հրաբխային խարամը օգտագործվելու է շինարարության մեջ որպես լցանյութ: Նախագծում ընդունված են բացահանքի հետևյալ պարամետրերը.

- Բացահանքի առավելագույն երկարությունը մակերևույթի վրա - 750մ;
- Բացահանքի առավելագույն լայնությունը մակերևույթի վրա - 650մ;
- Բացահանքի ընդհանուր մակերեսը մակերևույթի վրա - 228000մ²

Ազգացու 1. օրինակ



- Նախագծվող հանքի եզրագծում ներփակված հաշվեկշռային մարվող պաշարների ծավալը կազմում է 2213630մ³ խարամի զանգված:
- Եզրագծում հրաբխային խարամի արդյունահանվող պաշարների ծավալը կողային բնամասերում թողնված 201240մ³ կորուստների դեպքում կազմում է 2012390մ³ խարամի զանգված:
- Հանքի տարեկան արտադրողականությունը կազմում է 55000մ³ մարվող և 50000մ³ խարամի արդյունահանվող զանգված:
- Հանքի աշխատանքային ռեժիմը շուրջտարյա է /260 օր/, միահերթ, հնգօրյա աշխատանքային շաբաթով:
- Մշակումը ընդգրկում է 1955-1895մ բարձրության նիշերի միջև գտնվող զանգվածը:
- Հանքադաշտի բացումը իրականացվելու է մինչև ռելիեֆի սահմանագիծը արտաքին տեղադրված խրամով, իսկ սահմանագծից ներքև մեկ ընդհանուր ներքին տեղադրման խրամի միջոցով: Խրամների լայնությունը հատակում ընդունված է 8-12մ: Խարամի հանույթը կատարվելու է բուլդոզեր-էքսկավատոր կոմպլեքսի միջոցով: Բանվորական աստիճանի կողի թեքության անկյունը ընդունված է $\varphi=50-65^\circ$, մարված աստիճանի համար ընդունված է $\varphi=45-50^\circ$:
- Աշխատանքային աստիճանի բարձրությունը ընդունված է 5մ: Հանքի կողերն մարվելու են H=10մ բարձրությամբ աստիճաններով: Հանքի աշխատանքային կողի թեքության անկյունը ընդունված է $\varphi=45^\circ$:
- Բացահանքի մշակումը կատարվում է Զ-6112 էքսկավատորի միջոցով:
- Սննդի ընդունման, տաքացման և հանքի աշխատավորների կենցաղային հարցերի ապահովման համար նախագծով ընդունված են վազոն տնակներ:
- Խմելու ջուրը բացահանք է բերվում ավտոցիստեռնով և պահվում է հատուկ տարողությունների մեջ:
- Հանքի և կենցաղային օբյեկտների էլեկտրամատակարարումը նախատեսվում է 300կվա հզորության տրանսֆորմատորային ենթակայանից:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումը հնարավոր է սկսել միայն բացահանքում հանույթային աշխատանքների ավարտից հետո:

Բացահանքի նախագծվող փուլի ավարտից հետո ռեկուլտիվացվում է հանքի ներքին լցակույտը: Վերականգնվող մակերեսը կազմում է 15000մ²: Մակաբացման ապարների ծավալը 50730մ³ է:

Լեռնային աշխատանքների պատճառով խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնման համար հաշվարկված է 913000 դրամ:



Նախատեսվող գործունեության վնասակար բացասական ազդեցությունները նվազեցնելու կամ մեղմելու նպատակով, ըստ նախագծային փաստաթղթերի, նախատեսվում է մի շարք միջոցառումներ:

Եզրահանգում «Էդգար և Արման» ՍՊԸ կողմից ՀՀ Շիրակի մարզի Արթիկի հրաբխային խարամի հանքավայրի Հառիճի տեղամասի շահագործման ընթացքում նախագծում նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախագծային փաստաթղթերը, փորձաքննական գործընթացում առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կատարված լրամշակումները, ինչպես նաև Հառիճ համայնքում տեղի ունեցած երկու հանրային քննարկումների արդյունքները, որով համայնքը տվել է իր դրական կարծիքը նախատեսվող գործունեության իրականացման համար:

Փորձաքննական պահանջ

Անհրաժեշտ է եռամսյա ժամկետում ներկայացնել հանքավայրի սահմաններում ռեկուլտիվացիայի ենթակա տարածքները և սահմանված կարգով մինչև 2017թ-ի չորրորդ եռամսյակ իրականացնել ռեկուլտիվացիոն աշխատանքներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Էդգար և Արման>> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Շիրակի մարզի Արթիկի հրաբխային խարամի հանքավայրի Հառիճի տեղամասի արդյունահանման գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝



Ա.Սինասյան